

Ի. Ա. ԿՌԻՆՈՎԻ ԱՌԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԻԶՆԵՐԸ

ԼԵՆԱ ՀԱՁՅԱՆ

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո հայ ժողովրդի մի մասի համար ստեղծվեց խաղաղ զարգացման հնարավորություն: Սոցիալ-տնտեսական և կուլտուրական կյանքի փոփոխություններով պայմանավորվեց նաև հայ դրականության ու արվեստի զարգացումը: Ազգային գրականության զարգացմանը զուգընթաց նոր վերածնունդ ապրեց հայ թարգմանական գրականությունը, այս անգամ արդեն, զգալի չափով ռուսերենից:

Հայ և ռուս մշակութային կապերի կարևոր դրսևորումներից էին նաև ռուս առևկազիրներից կատարված հայերեն թարգմանությունները:

1841—1845 թթ. Կոնիլովի առակներից թարգմանություններ է կատարել Հակոբ Տեր-Ջաքարյանը: Նա ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցը, ապա նշանակվել է Ախալցխայի գավառական դպրոցի ուսուցիչ: Թարգմանությամբ զբաղվել է ուսանելու տարիներին: Կոնիլովից գրաբար թարգմանած նրա 12 առակներն անտիպ են¹: Հակոբ Տեր-Ջաքարյանի թարգմանական արվեստի մասին մոտավոր գաղափար կազմելու համար բերենք մի հատված «Զիժակ և ոգնի» առակից:

Բնագիրը.

.. Затем, что голоса такого не имею,
Чтоб Феба я достойно величал;
Сквозь слез Чиж бедный отвечал:
А слабым голосом я Феба петь не смею²...

Թարգմանությունը.

...Քանզի ձայն իմ չբաւէ
Գովել զփեփոսն ըստ արժանւոյն
Կից ընդ բանիցն արտասանեալ
Դողդոշ ձայնիւ զայս ասէն:
Իսկ անդաշնակ թոյլ ձայնիւ
Զփեփոսն երգել չյանդգնիմ³...

Տեր-Ջաքարյանի գրեթե բոլոր թարգմանություններն աչքի են ընկնում բնագրային հարազատությամբ:

¹ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 9129, էջ 12—34:

² И. А. Крылов, Басни, М.—Л., 1956, стр. 21.

³ Մատենադարան, ձեռ. 9129, էջ 13ա:

1849 թ. Մոսկվայում հրատարակվում է Լազարյան ճեմարանի օրենսդրության Հարուժյուն Քեոքչյանի գիրքը՝ «Մաղկաքաղ յառակացն Քոիլովի, Տմիթրիկի և Խեմնիցերի» վերնագրով: Գրքում տեղ են գտել 31 առակ, բոլորն էլ գրաբարով թարգմանված:

Առաջաբանում թարգմանիչը ընթերցողներին ծանոթացնում է առակի ժանրին, ժողովրդի ու գրականության վրա նրա ունեցած ազդեցությանը: Առակներն, ըստ Քեոքչյանի, «ոչ միայն զուարճախառն քաղցրախորժ են ընթերցասէր պատանեկաց, այլ և զգիւրագալթոտ վարս նոցա յասպարիզի ապագայ առաքինագործութենէ անդատին ի նախադրան անդ մատաղ հասակի նոցա հաստաբնտ կանդաղեն ի շաւիղս սրբակրօն վարուց»⁴:

Ռուսական առակների թարգմանությանը դիմելը Հ. Քեոքչյանը բացատրում է այսպես. «և որովհետև առակաբանութիւնք Մխիթարայ Գօշի կամ Եղովրոսի ի Վենետիկ տպագրեալք, ոչ միայն հազուագիւտ են աստ, այլ և ծանրագին վաճառին կարի, յայն սակս կարևոր դատեցաւ ի Ռուսաց լեզուէ թարգմանել...»⁵:

Հարուժյուն Քեոքչյանի թարգմանությունները մերթ բառացի են, մերթ՝ ազատ: Վերցնենք, օրինակ, «Ագռաւ և Աղուէս»⁶ առակը: Այն թարգմանված է տողացի, բացառությամբ մեկ-երկու դեպքերի: Բարոյախոսությունում *льстец* բառը դարձել է նոցին (մարդկանց — Լ. Հ.), բնադրում որոշակի է, որ ազոավը թառել է եղևնու վրա. «На елх Ворона взгромоздятся...»⁷, մի բան, որ առակին տալիս է տեղական երանգ: Թարգմանիչն այդ տողը թարգմանում է. «Ի ծառ ինչ նստաւ»: Լաֆոնտենի մոտ, որից, ի դեպ, վերցրել է Կոիլովը, նույնպես անորոշ է ծառի տեսակը: Կոիլովն այն հարմարեցրել է ռուս ընթերցողին: Հայ թարգմանիչն այս մասում մոտեցել է Լաֆոնտենի առակին:

Մի քանի տող ներքև կարդում ենք. «Голубушка, как хороша»: Քեոքչյանը չի գտել ընդգծված բառի տվյալ դեպքում՝ պահանջվող իմաստը: Այն նշանակում է ոչ թե «սիրուն աղանեակ», ինչպես թարգմանված է, այլ զուտ ռուսական փաղաքշական արտահայտություն է, որ բառադարձվում է իբրև «աղավնյակ»:

Բնագրի «Ведь ты б у нас была царь-птица» տողը դարձել է «Թագուհի թռչնոց գեր քան ըզտխակ»: Այս համեմատությունը բնագրում չկա, սխալ համեմատություն է, քանի որ տխակը թռչունների թագուհի լինելու հավակնորդ նույնիսկ չի եղել, և վերջապես, այս համեմատությունից առակն ամենեվին էլ չի շահել:

Անհաջող է թարգմանված նաև առակի վերջին տողը. «Ворона каркнула во все воронье горло».

Բնագրի վարպետորեն իրար հաջորդող կոշտ, իրավ «ազոավային» «ռ»-երը, որոնք առանձնապես հմայք են տալիս առակին, իրենց արտահայտությունը չեն գտել այս թարգմանությունում:

«Եբաց զիւր բերան և խանչեաց համբուն»:

Բավական ազատ թարգմանության օրինակ է «Մենավաճառ և կօշկակար» առակը:

⁴ «Մաղկաքաղ յառակացն Քոիլովի. Տմիթրիկի և Խեմնիցերի, թարգմանեաց Յարութին աւագ սարկաւազ Կեօքչեանց», Մոսկվա, 1849, Մանոթաբան, էջ 2 (այսուհետև՝ «Մաղկաքաղ»):

⁵ Նույն տեղում, էջ 2—3:

⁶ «Մաղկաքաղ», էջ 1:

⁷ И. А. Крылов, стр. 7.

Բնագիրը.

Ел сладко, вкусно пил;
На всякий день давал пиры, банкеты;
Сокровищ у него нет сметы...⁸ и т. д.

Թարգմանությունը. Ուտէր խորտիկըս ըմպէր քաղցրութեամբ.
Բընակէր ի ճոխ հարուստ պալատան,
Տայր ճաշ և ընթրիս սիրելեաց համայն...⁹ և այլն:

Այս առակում նույնպես Քեոբըլյանը հաճախ ավելացրել կամ պակասեցրել է տողեր, որի հետևանքով առակը երբեմն զրկվել է թեև ոչ հիմնական, բայց կարևոր մտքերից: Կոիլովի մեծավաճառը շատ հարուստ է, ուրախ է անցկացնում իր օրերը, բայց սարսափում է սնանկանալուց: Սա միանգամայն հասկանալի է ու հոգեբանական: Քեոբըլյանի մեծավաճառը ոչ միայն հարուստ, այլև՝ «ի մի բան ասել, նա երջանիկ էր»: Սա էլ տանջվում էր «Ջի ոչ յագենար և ոչ շատ ասէր»: Ուրեմն, հարուստը երջանիկ է. սա սխալ ընդհանրացում է և եթե նույնիսկ ընդունենք, թե հարստությամբ երջանիկ են լինում, ուրեմն այլևս ոչնչի համար նա չպետք է տանջվեր, մինչդեռ և՛ բնագրում, և՛ թարգմանության մեջ այդ մարդը ներկայանում է մեղ իբրև խեղճ ու տանջված մի ոսկեհասեր:

Կոիլովի մեկ այլ «Աղուէս և խաղող» առակում կարդում ենք.

Голодная кума-лиса залезла в сад;
В нем винограду кисти рделись.
У кумушки глаза и зубы разгорелись...¹⁰

Քեոբըլյանը թարգմանել է.

Աղուէսըն քաղցեալ
Ի պարտէզ մըտեալ,
Ողկոյզ խաղողոյ ետես անդ կախեալ:
Աչք և ատամունք նորա եռացին...¹¹

Բնագրում, ինչպես տեսնում ենք, ողկույզները հենց այնպես, ուղղակի՝ կախված չէին, այլ շիկնած կարմրին էին տալիս, շողշողում:

Հ. Քեոբըլյանից շուրջ տաս տարի առաջ ինչպե՞ս Լեոնովյանը նույնպես թարգմանել է այս առակը (գրաբար): Վերջինիս թարգմանությունը անհամեմատ հաջողված է: Նույն հատվածը և. Լեոնովյանը թարգմանել է այսպես.

⁸ Նույն տեղում, էջ 67:

⁹ «Մաղկաբաղ», էջ 23:

¹⁰ И. А. Крылов, стр. 171.

¹¹ «Մաղկաբաղ», էջ 103:

Սովետական աղուխուն ի յայգին,

Ուր կարմրատակէին ողկոյզ խաղողոյ,

Ատամունք և աչք նորա այրէին...¹²

Բնագրի «ХОТЬ ВИДИТ ОКО, ДО ЗУБ НЕЙМЕТ» տողերը Քեոքլյանի թարգմանությամբ դարձել են. «Աչքըն տեսանէր, բերանըն չուտէր»: Խ. Աբովյանի մոտ այլ կերպ է՝ «Ակն տեսանէ, ատամն ոչ ճարէ»:

Այս առակը թարգմանել է նաև Գաբրիել Այվազյանը, որի մոտ նշված տողերը այսպես են. «Կտեսնէին չափըները, չէին հասներ ակորները»¹³:

Թվում է վերջին թարգմանությունը ավելի մոտ է բնագրին: Աղվեսի ատամները տվյալ դեպքում ոչ թե չեն կտրում, այլ դրանց հասանելի չեն խաղողի ողկույզները:

Քեոքլյանի թարգմանություններից կարելի է օրինակելի համարել «Կապիկ և Ակնոց», «Կարապ, Զուկ և Խեցգետին», «Ագահ և Հաւ» առակները:

Քեոքլյանը բանաստեղծ չէր, առավել ևս՝ առակախոս: Թարգմանությունների նա դիմել է ոչ այնքան ստեղծագործական մղումով, որքան կյանքի պահանջով, իր ժողովրդին օգտակար լինելու գիտակցությամբ: Սակայն գրքույկը գրաբար էր և դա, դժբախտաբար, ինչ-որ չափով խոչընդոտում էր առակներն առավել լայն մասսաներին հասցնելու գործը:

«Սաղկաքաղը» մեծ ընդունելություն գտավ ոչ միայն Մոսկվայում, այլև Ռուսաստանի հայախոս շատ վայրերում: Ռափայել Պատկանյանը, որ թարգմանչից նվեր էր ստացել առակագրքից մեկ օրինակ, Ստավրոպոլից Քերովբե Պատկանյանին գրում է. «Սաղկաքաղը»... տեղիս հասարակությունը շատ հավանել է, և մանր հայոց աշակերտները ամենը բերանք առած են»¹⁴:

1850—1893 թթ. ընթացքում Կոիլովից առակներ է թարգմանել նաև Գևորգ Դոդոխյանը, որն ուսանել էր Մոսկվայում և Դորպատում: Թվով դրանք վեցն են: Առաջինը «Крестьянин и Змея» առակն է: Օձը գալիս է գյուղացու մոտ և ճգնում է ապացուցել, թե ինքը տարբերվում է մնացած իր ցեղակիցներից, որոնց մասին ժողովրդի մեջ ասվում է, թե չար են ու երախտամոռ, որ ոչ բարեկամություն գիտեն, ոչ հարազատություն և ուտում են նույնիսկ սեփական երեխաներին: Օձը գյուղացուն ոչ միայն առաջարկում է իր բարեկամությունը, այլև համոզում իրեն վստահել նրա երեխաների խնամքը: Խելացի գյուղացին չի հրապուրվում օձի խոստումներից: Նա ունի իր հաստատ համոզմունքն օձերի մասին.

Что лучшая Змея,

По мне, ни к чорту не годится.

Գ. Դոդոխյանն այս առակը թարգմանել է աշխարհաբար, բայց երբեմն-երբեմն զգացվում է Ղրիմի բարբառի ազդեցությունը:

Կոիլովի նշված առակի հայերենը կերտելիս Դոդոխյանը թույլ է տվել մի փոքր սխալ: Այսպես, բնագրի առաջին տողն է.

¹² Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1948, էջ 285:

¹³ «Առակք Քոիլովի, յինն գիրս, թարգմանեաց յաշխարհիկ բարբառ Գաբրիել Եպիսկոպոս Այվազեան», Կոստանդնուպոլիս, 1870, էջ 292:

¹⁴ Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1970, էջ 13:

Змея к Крестьянину пришла проситься в дом....

Ինչպես բնագրի, այնպես էլ տվյալ թարգմանության բովանդակությունը պահանջում են, որ օձը գնա ռամիկի մոտ, այնինչ ըստ Դոդոխյանի՝ «Ռամիկն եկավ առ օձը մեկ օր»:

Հետագա տողերից ականառու է, որ թարգմանիչն օձին չի օժտում աշխատասիրությամբ ու հնազանդությամբ, ինչպես էր բնագրում, այլ միայն.

Տեսնում ես, որ ես փոխել եմ կաշիս,
էլ դու ինձանից պետք չէ վախ քաշիս¹⁵:

Եթե բնագրում օձն ու ռամիկը բանավեճի մեջ են մտնում, այստեղ ռամիկը չի լսում նրա խոսքերին ու սպանում է, ասելով. «Կաշիդ ուրիշ է, հոգիդ միկենույն...»:

Եզրակացությունը լրիվ ինքնաստեղծ է.

Կեղծավոր մարդն է օձը, ընթերցող,
Լեզուն միշտ փոփոխ, հոգին անփոփոխ:

Այս բանը հատկանշական է Դոդոխյանին և բացահայտում է նրա բնավորության մի բնորոշ գիծը. անհերքելի է թշնամին, որքան էլ բարերար ձևանա: Համեմատությունից երևում է, որ «Օձ և ռամիկ» առակը ոչ թարգմանություն (ինչպես ներկայացված է հրատարակչի կողմից) և ոչ էլ մշակում է, այլ Կոիլովի վերոհիշյալ առակից ազդված, զանազան ինքնուրույն երանգներ ըստացած մի նոր առակ¹⁶:

Հաջորդը 1893 թ. թարգմանած «Գայլը և յուր լակոտը» առակն է, որը Դոդոխյանին ներկայացնում է իբրև հմուտ ու ծանրակշիռ թարգմանչի: Այսպես.

Գայլը ուղարկեց մի օր լակոտին,
Որ ուշադրությամբ անտառի շորս դին
Շրջելով գտնե որևէ ավար
Նախաճաշիկի կամ ճաշի համար:
Քանզի՝ կցանկար որդուն սիրական
Սովորացնել արհեստ հայրական¹⁷:

Այստեղ կան նաև անհատական մոտեցմամբ փոփոխված տողեր, որոնք դալիս են «հոր» նկատմամբ պատկառանքի զգացումից:

15 Գ. Դոդոխյան, Երկեր, հ. 1, Թբիլիսի, 1939, էջ 143:

16 Հրացուցիչ տեղիքներից խոսափելու համար, ստեղծված առակները պայմանականորեն անվանում ենք թարգմանություններ:

17 Գ. Դոդոխյան, նշվ. աշխ., էջ 138, բնագիրը.

Волченка Волк, начав помалу проучать
Отцовским промыслом питаться,
Послал его опушкой прогуляться;
А между тем велел прилежней примечать,
Нельзя ль где счастья им отвратить,
Позавтракать, иль пообедать!

Բնագրում գայլի ձագը գիմում է հորը շտապ ու հրամայական ձևով.

Пойдем скорей со мной!

Обед готов; ничего не может быть вернее...

Թարգմանությունում հրամայական այս ձևը փոխարինված է որդիական շեքով դիմումով.

Բերի, աչքի լույս.

Ճաշը պատրաստ է, չի կա տարակույս:

Իսկ Գայլի իմաստությունը հիմնավորելու համար Գ. Դոդոխյանը ավելացրել է «ծեր» մակդիրը:

Волк сказал: Сперва мне ведать надо,

Каков пастух у стада?

Ծեր գայլը ասաց.— Ճերթալուց առաջ

Պետք է, զավակս, տեղեկանամ քաջ

Ես հովվի մասին. ի՞նչպես է արդյոք:

Առականների մշակումը Դոդոխյանին հաջողվել է, և ցավալի է, որ նրա թողած գրական-թարգմանական ժառանգության մեջ դրանք փոքր մաս են կազմում:

1850 թ. Թիֆլիսում Գ. Պատկանյանը հիմնում ու խմբագրում է «Արարատ» շաբաթաթերթը: «Արարատը» խմբագրի բնութագրմամբ, ոչ օրագիր էր և ոչ լրագիր «այլ լուկ ընթերցանելի. և սորա մեջի նյութերն ոչ թե մեր սակավաթիվ ուսելոց զարմացնելու համար են, այլ բազմաթիվ շուսելոց համար. որոց հարկավոր է պարզ լեզու, և այն լեզվով գրվին թեթև բաներ, որոնց մեջ նախընտիր են՝ առականներ, պատմություններ, երգեր, բնական վիպասանության պատկանեալ հատվածներ, որ մեր ընթերցողաց ճաշակին և կարողության հարմար և դուրընկալ լինին»¹⁸:

Թերթը, սակայն, ունեցավ ընդամենը մեկ տարվա կյանք:

«Արարատի» տպագրած առականերում հանդիպում ենք նաև Գաբրիել Պատկանյանի՝ Կոնիովից կատարած թարգմանություններին, որոնք այնքան ազատ են, որ երբեմն դրանց նմանողություն կարելի է անվանել:

Օրինակ՝ «խոզն յապարանս մեծատան կամ Այր բժախնդիր» Ի. Կոնիովի Свинья» առակի թարգմանությունն է, որը Պատկանյանը սկսում է այսպես.

Խոզն լրսեց՝ որ մեծատունն՝ ամեն օր,

Մէջլիս ունի՝ ուտում է լավ՝ կերակուր.

Ասաց՝ երթամ՝ տեսնեմ նորա՝ կերածը

Իմանամ թէ՛ ղո՞րդ է խալիսի՝ ասածը:

Երբոր մըտավ՝ մեկ իջխանի՝ հայաթը,

¹⁸ «Արարատ», Տփլիս, 1850, էջ 216.

Առաջ տեսավ՝ մեկ տեղ կիտած՝ տան աղբը
 Մըտավ փորեց՝ դընշով շոփը՝ ու ցեխը,
 Զատ շրդտավ՝ դարձավ եկավ՝ յուր տեղը...¹⁹,

Բնադրում ունենք.

Свинья на барский двор когда-то затесалась;
 Вокруг конюшен там и кухню наслонялась;
 В сору, в навозе извалялась;
 В помоях по уши досыта накупалась;
 И из гостей домой
 Пришла свинья-свиньяей²⁰.

Թարգմանված առականների մեջ հանդիպում ենք այնպիսիների, որոնք ձեռն-տուն են հասնել բնագրին, դրանց կողքին, թարգմանական փորձի պակասի պատճառով գտնում ենք նաև թարգմանություններ, որոնք գրեթե համադրելի չեն բնագրին:

Խոսքը, սակայն, այն թարգմանիչների մասին չէ, որոնք բնագրից հեռացել են, ընդգծելու համար այս կամ այն հարցի մասին ունեցած իրենց անհատական մոտեցումը: Այլ այն շեղումների մասին է, որոնք չեն հանգում որևէ էական բանի, և թարգմանվել են այդպես, թարգմանիչ հնարավորությունների պատճառով:

Հետաքրքիր է Կոիլովի «Волк и Ягненок» առակի ազդեցությամբ գրված և Գաբրիել Պատկանյանի խմբագրած թերթում տպագրված մի առակ, որտեղ գործող անձինք, տեսարանները նույնն են, բայց այլ է գործողության ընթացքը²¹: Այս առակում գառը նույնիսկ չի հանդգնում արդարանալ, պաշտպանվելու փորձեր կատարել, այլ.

Գառը ասաց՝ հնազանդ եմ՝ քու կամքին,
 Մահ ու կեանքս՝ քո ձեռին է՝ ամեն օր,
 Արյունս էլ փեշքաշ լինի՝ իմ պարնին,
 Մեռնելու եմ՝ էգուց ըլի՝ թե էսօր²²:

Առակի այսպիսի հարցադրմամբ բացահայտվում են ոչ միայն առակագրի, այլև թերթի հրատարակչի հայացքները կյանքի, նրա հուզող հարցերի նկատմամբ: Առակի ընթերցումից հետևում է, որ դրանով քաջալերվում է ճակատագրի քմահաճույթներն անմոռն շտանելու գաղափարախոսությունը: Այս եզրակացությունն ենք հանգում, մանավանդ, երբ կարդում ենք «մեծահոգի» գայլի խոսքը.

¹⁹ Նույն տեղում, էջ 60—61:

²⁰ И. А. Крылов, стр. 90.

²¹ Լեզվա-ոճական որոշ տվյալներից ելնելով կարելի է հավաստել, որ առակը պատկանում է Գաբրիել Պատկանյանի գրչին:

²² «Արարատ», էջ 7—10:

ինձ պետք չէ քու արյունը,
Քեզ բաշխեցի՝ քու կյանք և քու՝ արևը,
Խոնարհ ես դու՝ քեզ ես մեկ գէթ չիմանի,
Գնա ապրիր՝ ի մեջ չայիր՝ չիմանի²³:

1876 թ. Քերովբե Քուչներյանը հրատարակում է առակաների իր անդրանիկ գրքույկը²⁴, ճորովհետև ազգիս մեջ տակավին չէ հրատարակված առականաց հավաքում մը՝ այլ և այլ հեղինակաց (ընդգծումը մերն է— Լ. Հ.) և այն ալ աշխարհիկ լեզվով... այլևայլ ժամանակ թարգմանաբար գրած առականերս ի մի հավաքելով այս փոքրիկ հատորիկս ձևացուցի, հուսալով որ պիտի ծառայություն մը ըլլա ազգային մանկանց»²⁵: Գրքույկի նախաբանում հավաստիացնում է, որ «Եթէ համառօտ գրքույկս ունենա հարգ ազգայնոց առջև և ծառայի իր վախճանին, անշուշտ ուրիշ անգամ ավելի ճոխացեալ ի լույս կընծայի հօգուտ ազգային մանկտվուն»²⁶:

Գրքում տպագրված 54 առակաները թարգմանություններ են կամ հետևողություն Եզոպոսի, Փեդրոսի, Լաֆոնտենի, Ֆլորիանի և Կոիլովի առակաների:

Առակաները բաժանված են երեք մասի: Ա մասն իր մեջ ամփոփում է ավելի հեշտ, «անխորամանկ» առականեր (9-ը Կոիլովից): Բ մասը, խորիմաստ ու համեմատաբար երկարաշունչ առականեր են (7-ը Կոիլովից): Գ մասը գրաբար թարգմանված առականեր են (3-ը Կոիլովից): Դրաբար թարգմանությունները արված են ուսուցողական նպատակով, լեզվի իմացության մեջ հմտանալու համար:

Այսպիսով, առաջին գրքույկի 54 առականերից 19-ը Կոիլովի հեղինակություններն են:

Հավատարիմ մնալով իր խոստմանը, 1894 թ. Ք. Քուչներյանը հրատարակում է առակաների երկրորդ ժողովածուն և դրա նպատակի մասին գրում է. «առաջինն՝ աշխարհիս վրա խելոք վարվելու բարոյական սկզբունքը տպավորել մանուկ հասակի, հայ փափուկ սրտերու մեջ: Երկրորդ՝ մեր աշխարհաբար, կոկ լեզուն սիրելի ընծայել նոցա»²⁷, և ապա նաև՝ «որպեսզի աշխարհաբարին մեջ քաջավարժ աշակերտք մեր գրոց գեղեցիկ լեզվին ևս ճաշակը առնուն»։ Թարգմանիչը, նախորդի նման, այս գրքույկի վերջում նույնպես զետեղել է գրաբար թարգմանած մի քանի առակ:

Թարգմանած առակաների թվով այս երկու գրքույկները գրեթե հավասար են (երկրորդում տպագրված է 57 առակ): Երկրորդ գրքույկում թարգմանիչը Կոիլովից տպագրել է 9 առակ: Առակաների քանակական հարաբերությունը թույլ է տալիս հավաստելու, որ Ք. Քուչներյանն ավելի հակված է եղել թարգմանելու Կոիլովի առականերից:

Երկու գրքույկներն էլ աշխարհաբար են, բացառությամբ այն մի քանի առակաների, որոնք թարգմանված են գրաբար և այստեղ տպագրվել են աշխարհաբարի հետ համեմատելու նպատակով: Երկու գրքույկներն էլ վերնագրված են «Կաղանդչէք», «որ ծնողք ալ իրենց տղայոց այս համառօտ և դյուրագին

23 Նույն տեղում:

24 Ք. Քուչներյան, Կաղանդչէք, Առակք, Մաղկաքաղք, Վենետիկ, 1876:

25 Նույն տեղում, էջ Գ:

26 Նույն տեղում, էջ Գ:

27 Ք. Քուչներյան, Կաղանդչէք, Առակք, Մաղկաքաղք, Վենետիկ, 1894, էջ 25:

գրքույկը կաղանդէք ընծային իբրև ի նախնական կրթության մեր հայրենյաց լեզվին և ի խրատ առողջ բարոյականի»²⁸։

Քուշներյանը Կոհիլովի առականները դյուրըմբռնելի դարձնելու համար (քանի որ դրված են դրանք հիմնականում մանկանց համար) ֆրանսիացի առականդիր Լաֆոնտենի հետևությամբ ավելացրել է երկխոսութուններ («Գալ և աղվես», «Գալ և մուկն» և այլն)։ Երբեմն նույն գործող անձերով ու հարցադրմամբ ստեղծվել են գրեթե նոր, ծավալով կրկնակի, երկխոսութուններով հարուստ առականներ («Աղվես և խաղող», «Խորհուրդ կենդանեաց» և այլն)։

Ըստ Կոհիլովի ունենք.

Ну, что ж!
На взгляд-то он хорош,
Да зелен-ягодки нет зрелой:
Тотчас оскомину набьешь²⁹:

Քուշներյանն այն դարձրել է.

Թյու, ես անխելք եմ, ասաց,
Որ ազդխին³⁰ հտեեն
Կանցընեմ իմ թանկ ատեն.
Միշտ այդպիսի փուճ բաներ՝
Մարդիկներու կըլլան կեր³¹:

«Գալլն ու դառը» թարգմանիչների ամենասիրած առականներից է, ուստի և յուրաքանչյուր թարգմանություն ստացվել է յուրօրինակ։ Եթե բնագրում, ինչպես և մնացած բոլոր թարգմանիչների մոտ, գալը պատասխանատվություն չի կրում իր արածների համար, ապա Քուշներյանը նրան ներկայացրել է «դիվանագետի» խառնվածքով։ Դալլն այստեղ ձգտում է օրինականացնել իր բարբարոսությունը։ Թեև նրան վերջնականապես չի հաջողվում ապացուցել իր իրավունքները, բայց, համենայն դեպս, ապագայում հասարակական դատից խուսափելու համար դիմում է այդ ինքնախաբեական միջոցին։

...Ուզեց իսկույն պատռել լափել,
Խեղճ կենդանւոյն անպարտ արիւն:
Բայց «Չէ» ասաց, թող համաձայն օրինաց,
(Ասած օրենքն, էր այն օրենքն հրգօրաց)
Այս գործին տանք մէկ աղէկ գոյն»³²:

Ի տարբերություն մնացած գրեթե բոլոր թարգմանիչների, Ք. Քուշներյանի թարգմանություններում ակնհայտորեն ընդգծվում է թարգմանչի անհա-

28 Ք. Քուշներյան, Կաղանդէք, Վենետիկ, 1876, էջ 7։

29 И. А. Крылов, стр. 171.

30 Խակ խաղողի։

31 Ք. Քուշներյան, նշվ. աշխ., էջ 54։

32 Նույն տեղում, էջ 49։

տական մոտեցումը նյութին, որի շնորհիվ գիրքն իր ուղղակի բովանդակությամբ հետաքրքրում է փոքրերին, այլաբանական իմաստով՝ մեծերին:

Բնագրում դայլը գառին հոշոտելուց առաջ հայտարարում է. «Ты виноват уж тем, что хочется мне кушать»³³, մեկ անգամ ևս ի հայտ բերելով նրա անմեղությունը: Թարգմանությունում գայլն անշտապ բացատրում է.

Զի դուք մեղի չեք խնայեր,

Ոչ ձեր հովիվ և ոչ ձեր շուն,

Պետք է ատոնց պարտքը տաս դուն³⁴:

«Փոքրերի» վրեժխնդրության թեման Ք. Քուլենբյանի թարգմանություններում արժարժվում է ոչ մեկ անգամ և միշտ էլ դրան տրված է անհատական սկիզբ և վերջավորություն: Կոհիլովի «Лев и Комар» առակի թարգմանությունում ուժեղն արհամարհում է թուլին, փոխարենը հատուցելով կյանքով: Միևնույն գրքույկում նա զետեղել է Լաֆոնտենի «Le Lion et l'errat» առակը, որ «ուժեղը» փրկվում է «թուլի» օգնությամբ: Այս երկու առակների թարգմանությանը դիմելը պատահականություն չէր, այլ կյանքի նկատմամբ Քուլենբյանի ունեցած հավատամքը, որ ներկայացվում է ընթերցողին հանրահայտ առակների միջոցով: Այս կերպ նա փորձում է մարդկանցից հեռացնել ուժեղի ու թուլի տիրող հարաբերության ախտը:

Կոհիլովի «Лев и Комар» առակում («Առյուծ և մուն») թուլն ուժեղին շատ տանջելուց հետո, ներում է, մինչդեռ թարգմանությունում նա գործը հասցնում է մինչև հաղթական ավարտը: Առակը թարգմանությունում ունի չուտ հայկական մուտք՝ իբրև բարոյախոսություն.

Թե Սողոմոն ըլլաս գիտուն,

Դարձյալ ըզքեզ տրգետ ճանջիր.

Եվ թե ուժով Տորքա պես

Ժայռերն ի ծով գլորես

Դեռ մի կարծեր թե քու առջև

Ամենքն պիտի բռնեն բարև³⁵,

Երկրորդ՝ Լաֆոնտենի առակի («Առյուծ և մուկ») թարգմանությամբ Քուլենբյանը ընթերցողին հետ է պահում անզգույշ քայլից.

Զի չրկարծած խեղճ թըշնամիդ

Քու կորստեանդ կըլլա առիթ.

Ընդ հակառակն փոքր երախտիք

Կը խափանեն մեծ մեծ չարիք³⁶:

Քուլենբյանի՝ Կոհիլովից կատարած թարգմանություններում երբեմն հարադատորեն վերարտադրված է բնագիրը, երբեմն փոքր-ինչ շեղված է նրանից,

³³ И. А. Крылов, стр. 23.

³⁴ Ք. Քուլենբյան, նշվ. աշխ., էջ 49.

³⁵ Նույն տեղում, էջ 67:

³⁶ Ք. Քուլենբյան, Կաղանդէք, Վենետիկ, 1894, էջ 50:

երբեմն էլ ստեղծված են նոր որակ ու այլ մտքեր հասկանալու հնարավորություններ: Բայց այս բազմազանության կողքին թարգմանիչն ունեցել է նաև մի կայուն սկզբունք. գեղարվեստական թարգմանության ընթացքում հետևողականորեն մերժել է օտար դարձվածքներն արհեստականորեն, շինծու հայացնելը, հրաժարվել «ստրկաբար մոլրալուց» և անպատճառ գտել է անհրաժեշտ արտահայտության հայկական համարժեքը:

Այսպիսով, Կոհիլովի մի քանի առակների թարգմանությունների կողքին կան նաև բավական շատ առակներ, որոնք հակառակ Քուշնեյանի պնդումի, հետաքրքիր մշակումներ են: Սա ավելի գնահատելի է, քան կարող էր լինել թարգմանությունը, մանավանդ որ Գ. Այվազյանի բարձրարվեստ թարգմանությամբ հրատարակված երկու գրքերն այդ ժամանակ արդեն վայելում էին մեծ ժողովրդականություն:

Այսպիսով, Կոհիլովի առակները թարգմանելիս հայ թարգմանիչներն ունեցել են ամենատարբեր սկզբունքներ. ոմանք ձգտել են վարպետորեն հայացնել արտահայտություններն ու գտնել ողուսերեն բառերի համարժեքները, ոմանք շնորհիվ հայ ընթերցողները ձեռքի տակ ունեն փայլուն թարգմանություն, ոմանք էլ առակին տվել են ցանկացած երանգը: Սակայն ինչ մոտեցմամբ էլ թարգմանված լինեն այդ առակները, ակնհայտորեն ցույց են տալիս այն դերը, որ մեր դրական-հասարակական կյանքում խաղացել են ողուս «ժողովրդական» բանաստեղծ Բ. Ա. Կոհիլովի առակների թարգմանությունները:

ПЕРВЫЕ АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЧИКИ БАСЕН И. А. КРЫЛОВА

ЛЕНА АДЖЯН

Р е з ю м е

В начале XIX в. в армянской действительности возникает особый интерес к переводной литературе. Перевод творчества И. А. Крылова имел большое моральное и дидактическое значение как для русского, так и для других народов.

Армянские переводчики подходили к переводу басен Крылова с самых разных позиций: кое-кто из них стремился к мастерской передаче русских выражений, к обнаружению эквивалентов русских слов; благодаря же другим армянский читатель имел под рукой блестящие переводы; третья часть переводчиков придавала басням желаемые нюансы и т. д. Однако как бы ни были переведены эти басни, они с очевидностью подчеркивают ту роль, которую играли переводы басен И. А. Крылова в армянской литературной и общественной жизни.